


«Փիլիսոփայական արուեստից ցուցա-
նիւր» լաւագոյն չէ՞ ընթեռնուլ արուես-
տին: քանզի արուեստ փիլիսոփայութեան
մի է. և միովն կը բովանդակէր զամե-
նայն գիտութիւն մարդկային:

«Երգեցողական տառիցն»

Արդեօք «Երբայտիսն տառիցն»՞ յայսմ
կարող էր Ս. Սահակ գերագանցել քան
զբազում գիտնովք յունաց. վասն զի Եզ-
նելայ բերած հաստատուն օրինակ Ս.
Գրոց, զուցէ նշանակէ երբայական բնա-
զիրը. որով մեր թարգմանութեան տար-
բերութիւնները յոյն բնագրից կամ Եօթա-
նասնից կոչուածն, այսու կարելի է բա-
ցարել: Եթէ ինչպէս ոմանը համարին թէ
Եզնելայ բերածն Որոգինի Վեցիջեանն էր,
չի հակասեր մեր ըսածին, զի Որոգինի
բոլոր արդիւնքն էր Երբայական բնագրի
հարազատ ընթերցումը տալ և ընդ նմին
հարազատ թարգմանութիւնն: Ս. Սահա-
կին հաւասար երբայագէտ Յունաց մէջ
չգտնուիլ, անկարելի ըսն մը չէ:

Ն. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ



ԿԱՐԾԻՔ ԵՒ ԿԵՂԾԻՔ

Հայր Անդրիկեան, որ այս երկու ձա-
յները միեւնոյն բառին պարզապէս երկու
ձեւերը կը համարի, իր փաստերը աւելի
մանրամասնօրէն յառաջ բերելով այս ան-
գամ (Ֆազմ. Սեպտ.), շնորհէ կ'ընէ զիս
հրաւիրել, իրրե վէճին սկսողը, վերջին
բառ մը ըսելու: Ես ալ իմ փաստերը
կրկնելու և բացատրելու այս առիթով
ստիպուած եմ քիչ մը աւելի մանրամաս-
նութեանց մէջ մտնել:

Երկու բառերու ձայներուն լծորդութիւ-
նը ինքնին բաւական ապացոյց չէ անոնց
նոյնութեանը: Այս (ասիկա) և այս (չար
ոգի) բոլորովին նոյն են հնչումով, ինչ-
պէս այր (քարայր) և այր (մարդ), սա-
կայն ոչ ոք կը կարծէ թէ անոնք միև-

նոյն բառը ըլլան: Յայտնի է թէ անոնց
ձայնի նոյնութիւնը դիպուածական է: Նը-
մանապէս դիպուածական նմանութիւն ու-
նեցող շատ բառեր կան զորս լեզուաբանը
կը զգուշանան միեւնոյն բառի երկու տար-
բեր նշանկերպումներն նկատելէ: Այս կար-
գէն են, ըստ իս, կարծիք և կեղծիք:

Կարծիքը անկատար գիտութիւն է, բո-
լորովին ստույգ չեղող համոզում մը որ
հաւանականութեան փաստերու կը յենու,
և բնաւ կապ չունի կեղծելու հետ: Պ.
կը կարծէ թէ հիւանդ է ինքը թէ կը կեղ-
ծէ: Այսպիսի խօսքերու մէջ երկու բառե-
րը կը հակադրուին իրրե հականիշ: Եթէ
կեղծիք է, ալ կարծիք չի կրնար ըլլալ
անոր մօլի: մէջ: Կարծիքի մը բնութեանն
է անկեղծ ըլլալ: «Չեք անկեղծ կարծիքն
է սսիկա» կրնանք հարցնել. սակայն ար-
տառոց պիտի ըլլար հարցնել. «ձեր ան-
կարծիք կարծիքն է այս»: Երկու բառե-
րուն իմաստները, ամենուս ալ հասկացու-
ղութեամբն ու տիեզերական գործածու
թեամբ, իրարու հակառակ են: Ուրեմն ա-
նոնք միեւնոյն բառի երկու տարբեր ձա-
յներ չեն:

Պ. Չօրպանեան վայրապար փորձած է
իմաստներու այս հակառակութիւնը մեկ-
նել՝ ըսելով թէ երկու բառերը «ժամա-
նակի ընթացքին իրարմէ տարբեր ուղղու-
թիւն բռնելով... բուն իմաստներն կորսն-
ցուցած են և իրենց յատուկ զատ զատ
նշանակութիւն ունեցած են»: Ի հաստա-
տութիւն ի մէջ կը բերէ իմ յիշած մէկ
օրինակս, post բառը, որ ձողի նշանա-
կութեանն բարձրացած է մինչև թղթա-
տարութեան իմաստը: Սակայն քաջ ի մտի
ունենալ պէտք է սա հիմնական սկզբունքը
թէ բառի մը նշանակութիւնը պարզն
կենդոտին, պատիկէն մեծին, թանձրա-
ցեալէն վերացեալին կ'երթայ իր զար-
գացման ընթացքին մէջ, բայց ոչ երբէք
իր նախնական իմաստին հակառակ ու
անհամաձայն նշանակութեան մը: Այսպէս
postը թղթատարութիւն եղած է, éti-
quette, թղթի կտորը, եկած է վերջա-
պէս նշանակել քաղաքավար ընկերութեան

վարմունքի օրէնքները, և պզտիկ ծուղակը առած է դժոխքի նշանակութիւն ալ, սաւ կայն այդպիսի բոլոր օրինակներու մէջ ակնեղեւ կը տեսնուի հոլովոյթի բնական ընթացքը, իմաստներուն բանաւոր և հասկանալի զարգացումը : Ինչպէս որ բուն արմատէ մը ծագող երկրորդական արմատները մեղմ այլակերպումներով միայն կը զանազանին իրարմէ, և փոխանակուած տառերը լծուդ տառեր կ'ըլլան, այնպէս ալ անոնց համապատասխանող նշանակութիւններն մեղմ եղանակաւորումներով կը տարբերին : Այս է լեզուաբանական մեծ սկզբունքը որ թոյլ չի տար կեղծիքն ու կարծիքը նոյն համարելու, քանի որ անոնց նշանակութիւններն իրարու աննման են ու հակադիր :

Քայր Անդրկիան կը փափաքի որ լատ. sine cera կամ sincèrè և կեղծիքի միջև ազգակցութիւնը, որուն անհարկած եմ ի սկզբան, քիչ մը աւելի բացատրեմ :

Այս մասին հայերէնը աւելի լոյս կը սփռէ լատիներէնի վրայ քան լատիներէնը՝ հայերէնի Cera, մեղրամոմ, բառին արմատը cer է, որ անշուշտ աւելի լայն և ընդհանուր իմաստ մը ունեցած է : Ասիկա կը գուշակենք հայերէնի լուսոյն շնորհիւ Հայերէնի մէջ այդ cer արմատին երկու տարբեր ձեւերը կան, սեր և կեղ : Ուրիշ օրինակներու մէջ ալ լատին մէկ ձեւի գէմ հայերէնը երկու կամ աւելի ձեւեր կը հանէ : Հայերէն կաթն-սեր բարդը բացայայտ ցոյց կուտայ սեր արմատին նշանակութիւնը, որ է կաթին եւրեսը ելած ու թանձրացած ծածկոյթը, կեղեւը : Ուրեմն սեր և կեղ միեւնոյն արմատին երկու եղանակաւորումներն են, մէկը հեղուկ և միւս հաստատուն մարմիններու երեսին վրայ ձեւացած ծածկոյթը ցոյց տալու : Լատիներէնը cer արմատը զատ չի գործածեր այլ ևս, միայն ածանցներու մէջ անիկա պահուած է, ինչպէս cera, cerumen և sincèrus : Այս վերջին բառը մեր «անկեղծ» ին ճշգրիտ համապատասխան է թէ կազմով և թէ նշաւ

նակութեամբ : Sin == ան, cer == կեղ, us == ծ :

Սակայն իմ հաւաստումը թէ կեղծիք և կարծիք այլ և այլ են, կարօտ չէ լատին sincèrus ի օգնութեան : Աներկբայ եմ թէ սեր և կեղ նոյն են, ուրեմն կեղեւի բուն արմատն է կեղ, որմէ ունինք նաև կեղեք-եղ-եղ : Այս կեղ կամ ծածկոյթ արմատէն է կեղ-ծ բառը, ինչպէս պատ(եմ)պատիճ, պատեան արմատներէն են պատ-իւր և պատ-ր-անք : Երկու դէպքին մէջ ևս նիւթական ծածկոյթը բարդական քոյի իմաստին բարձրացել է : Կեղծը կամ պատիրը այն բանն է որուն իսկութիւնը, ներքինը, սուրճ բանի մը, և աւելի ազնիւ բանի մը, երևոյթը, տեսիլը վրան առած ու ինքզինքը ծածկած է : Փայտէ շինուած մը, զրաէն սպիտակ կրի օժու մովը, կ'երեւնայ մարմարակուտ կամ քարաշէն, կը կեղծէ ըլլալ ինչ որ չէ : Այսպէս ալ թշնամին բարեկամի երևոյթ կ'առնու, կեղծ կամ պատիր (կեղած կամ պատանաւոր) բարեկամ է : «Որմ բռնալ»ը և «Գերեզմանը յսնալը»ը նոյնպէս ցոյց կու տան թէ մարդիկ կեղծը կեղ-ած, ծեփ-ած, զրաէն բան մը վրան քսած նրկատեք են : Ու ո՞վ կրնայ երկբայիլ այս նշանակական կապակցութիւններուն բնական ու բանաւոր ըլլալուն :

Ես կեղ բառէն կը գնեմ նաև կեղ-տ բառին ծագումը : Կեղաւոր ոչ այլ ինչ է բայց եթէ բանի մը երեսը ծածկող փոշի կամ աղա որ տեսակ մը ծածկոյթ, կեղեւ կը ձեւացնէ :

Պ. Չօրպանեանէ կ'իմանամ թէ Հիւսլըման կ'ընդունէր կեղեւ և կեղծ բառերուն նոյնութիւնը : Ես իրմէ անկախօրէն ըրած եմ իմ դիտողութիւնը : Սակայն կը զարմանամ որ գերման հայագէտը իր քերականութեան մէջ կեղեւ բառը ուսորեւելէն փոխառեալներու կարգը կը դասէ : Այս սխալին մէջ մէկէ աւելի անգամներ ինկած է անիկա, ինչպէս ուրիշ տեղ ցոյց պիտի տամ :

Պ. Չօրպանեանէ կ'ընդունի նաև թէ

կարծել և կասկածել նոյն են, այսինքն կասկածելն է կայծ—կայծ—ել ձեռն սղեալը։ Ասկա ինչպէս կրնայ հաշտուիլ միւս հաւաստումին հետ թէ կարծիք և կեղծիք նոյն են։ Փանի որ կեղծին բունն է կեղ, ալ ինչպէս կրնայ կեղը կայծին կամ կարծին հետ նոյնանալ ձայնաբանօրէն և նշանակօրէն։ Կեղեւէն կայծին ինչպէս կ'երթայ մարդկային մտածութիւնը։ Ասիկա անկարելի է։ Բայց կայծէն կարծիքի բնականօրէն կ'երթայ. վասն զի կայծը պզտիկ կամ վաղանցիկ լոյս մ'է, որ բաները շատ պայծառ և ստույգ կերպով չի ցուցնէր մեզի, և չի թողուր որ հաստատ համոզում և աներկայիչի տեղեկութիւն մը կազմենք նշմարուած առարկային կամ շարժումին վրայ, այլ միայն կայծիք մը, կարծիք մը կ'ունենանք, կը նշմարենք։

Լեզուաբանութիւնը իմաստասիրութիւն մ'ունի, կամ պէտք է որ ունենայ։

ՏԵՐԹ. Մ. ՍՄԱԾ ՓԱՐԻԷԼԵԱՆ

Նիւ Եորք



ԱՌ ՎԵՐ. Զ. Ն. ԱՆԴՐԻԿԵԱՆ

« Կարծիք, կեղծիք » բառերուն վրայ Բազմավէպի մէջ բացուած վէճը վերջաւաւու մօտ չերևար զեռ, և ինչպէս կ'ըսէր, «այս երկու բառերուն շուրջը արդէն պզտիկ զբաղանդութիւն մը կազմուած է»։

Անոնք Հայ լեզուի ամենադիւրին դժուարութիւններէն են սակայն և լեզուին կազմական օրէնքներուն և ներքին և սովորական հանգամանքներուն վրայ փոքր ինչ ուշադիր հայեացք մը կը բաւէ անոնց տեղը՝ դիւրը և լինելովժանն կերպը արտայայտելու։ Եւ ասոնք շատոնց շարադասած եմ իմ պատրաստած Համեմատական աշխատութեանս մէջ և չէի ալ ուզեր միջամտել ձեր ներկայ վիճաբանու-

թեանը եթէ համաձայնութիւնը կատարեալ տեսնէի։ Բայց որովհետեւ չէ, հարկ կը համարեմ իմ հայեացքներս ալ ներկայացնել ձեզ, եթէ թոյլ կու տաք։

Եւ նախ եզրակացութենէն սկսելով ըսեմ որ

Կարծիք, կեղծիք, կասկած

Երեքն ալ նոյն են, «կարծ» արմատի ծաւալումներ, կրկնումներ և փոփոխութիւններ որոնց օրինակները չեն պակսիր լեզուին մէջ։ Ուրեմն ձեր վերջին եզրակացութիւնն է ճիշդը որուն հասեր եմ ես ալ իմ հետազօտութեանցս մէջ։ Եւ ահա թէ ինչպէս.

Դիտած եմ որ հայերէնի մէջ կրկնակ բառերը մասնաւոր օրէնքներու կը հպատակին և որոշ դասակարգեր կը կազմեն որոնց մի քանի գլխաւորները նշանակած եմ։

Այսպէս, զոր օրինակ.

Ա. ԴԱՍ

Այն կրկնակներն են որոնց երկու եզրերն ալ ամբողջ են և երբեմն զօդերով և երբեմն առանց ո՛ր և է միջնորդի զուգուած.

այլևայլ	ծերծեք	շողոյ(եմ)
ափափ(այ)	ծործոր	շրշրջ(եմ)
յաղրաղ(այք)	կափկափ(եմ)	ոստոստ(եւմ)
բնկրեկ	կերկեր	լարալար
գոնցազոնց	կեշեշ(եմ)	լարլար(աւք)
գոշրոշար(ամ)	կծռակիծ	պատկպատ
գագա(ամ)	կողկողիմ	պեպպե
դեգադեգ	կորակոր	շախշախ(եմ)
դողդող(ամ)	կցկց(իմ)	տորտոր
երեր	հոսհոս(իմ)	վազվազ(եմ)
զանազան	ձգձգ(իմ)	վաղվաղ(եմ)
բաքբաք(ոտ)	ձախձախ(ուս)	վաշ վաշ
ժիրաժիր	ձոջձոջ(եմ)	փափփայ(եմ)
լիռալի	ձուզձուզ(իմ)	փողփող(եմ)
խախխար	մեծամեծ	փափ(ամ)
խոլխոլ(եմ)	մոմ(ամ)	քաքքայ(եմ)
խոսխոս(եմ)	յեղյեղ(եմ)	քթքթ(եմ)
ծափծափ(եմ)	յօյ յօյ	քրքր(եմ)։